

ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2010 թվականի դեկտեմբերի 13-ին գումարված արտահերթ նստաշրջանի մասին

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման ութերորդ նստաշրջանի ավարտից հետո ՀՀ կառավարության նախաձեռնությամբ գումարվեց ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան:

Նստաշրջանի ընթացքում քննարկվեց 32 հարց, որից 31-ը ՀՀ օրենքների նախագծեր էին (5-ը՝ անհետաձգելի) և մեկ միջազգային պայմանագիր: Բոլոր օրինագծերը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին:

Օրինագծերից 26-ը քննարկվեցին և ընդունվեցին ամբողջությամբ, 3-ը՝ 1-ին ընթերցմամբ, իսկ 2-ի ընդունումը 2-րդ ընթերցմամբ մերժվեց (քվեարկությունը չկայացավ՝ քվորում չլինելու պատճառով):

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման ութերորդ նստաշրջանի և արտահերթ նստաշրջանի ընթացքում ընդունված կառավարության օրենսդրական նախաձեռնությունները հիմնականում միտված էին Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավմանը. այն է՝ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, հաշվետվությունների ներկայացման, գերավճարի վերադարձման, գործունեության առանձին տեսակների համար թույլտվությունների ստացման և այլ նմանատիպ հարցերի կապակցությամբ պետական մարմինների հետ հարաբերությունների պարզեցմանը, մեկ պատուհանի սկզբունքի կիրառմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, սոցիալական քաղաքականության իրականացմանը:

1. Հակակոռուպցիոն բնույթի օրենքներ.

1.1) <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> և դրան կից ընդունված 15 այլ օրենքների հիման վրա ապահովվելու է անձնական հաշվի քարտերի էլեկտրոնային եղանակով կիրառման և վարման առումով հարկային հաշվառման հստակեցումը, պարզեցումը, կանոնակարգումը: Գործարարները հնարավորություն են ունենալու հարկային հաշվետվությունները ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ ունենալով հարկային մարմիններում գրանցված էլեկտրոնային ստորագրություն: Արդյունքում նվազելու է գործարար և հարկային մարմիններ անմիջական շփումը, ինչն էլ կթեթևացնի գործարարների ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև կսահմանափակվեն կոռուպցիոն ռիսկերը:

1.2) <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>>, <<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքներն էապես սահմանափակեցին հարկումից խուսափելու հնարավորությունները: Նշված օրենքներով որպես փոխկապակցված անձինք դիտարկվեցին ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործունեություն իրականացնող իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձինք: Արդյունքում, սահմանափակվեցին փոխկապակցված անձանց՝ ԱԱՀ-ի չհարկվող շեմից օգտվելու հնարավորությունները:

1.3) «Արտոնագրային վճարների մասին» և դրան կից ընդունված օրենքներով հնարավորություն է տրվում առավել փոքր (մինչև 6մլն դրամ շրջանառություն ունեցող) հարկ վճարող անհատ ձեռնարկատերերին հաստատագրված վճարով հարկման կարգի փոխարեն ընտրել

արտոնագրային վճարով հարկման կարգը: Արդյունքում, հարկային վարչարարության իրականացման տեսանկյունից կկրճատվի առավել փոքր հարկ վճարողներ և հարկային մարմին շփումը, ինչն էլ գործարարներին կազատի անհարկի խնդիրներից՝ նվազեցնելով նաև կոռուպցիոն ռիսկերը:

1.4) «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսվում են գնումների համակարգի ինստիտուցիոնալ վերափոխումներ, որոնց նպատակը գնումների համակարգի ընդգրկման շրջանակի հստակեցումն է, ինչպես նաև գնումների գործընթացի կարգավորման և կազմակերպման գործում ներգրավված պետական մարմինների իրավունքների ու պարտականությունների հավասարակշռումը: Արդյունքում գնումների գործընթացը առավել հստակեցվել է, առևտրային կազմակերպությունները ձեռք են բերել գնումների գործընթացում իրենց շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ:

2. Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված օրենքներ.

2.1) <<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքը պայմաններ է ստեղծելու ներդրումների իրականացման համար: Արտոնությունների տրամադրման շնորհիվ նախատեսվում է էականորեն զարգացնել Հայաստանի Հանրապետության տարբեր ոլորտներում գործունեություն իրականացնող, ինչպես նաև նորաստեղծ ընկերությունների հնարավորությունները՝ արդի և եվրոպական ստանդարտներին համապատասխան սարքավորումների ներմուծման և շահագործման գործում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներդրումային ծրագրերը հիմնականում ուղղված են Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանքների արտահանմանը, նման ծրագրերի իրականացումը դրական ազդեցություն է ունենալու ողջ տնտեսության համար:

2.2) «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին և «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունումը կնպաստի գործարար միջավայրի բարելավմանը: Օգտագործելով միջազգային լավագույն փորձը՝ օրենքներով կպարզեցվեն մաքսային ընթացակարգերը՝ մաքսային սահմանին հսկողության ենթակա փաստաթղթերի կրճատման ճանապարհով (ընդ որում՝ ոչ սակագնային կարգավորման փաստաթղթերի, այլ հավաստագրերի, թույլտվությունների):

2.3) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի շնորհիվ առանց ուսումնասիրության կամ ստուգման արտահանման գործարքների մասով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարները կուղղվեն հարկ վճարողների այլ պարտավորությունների մարմանը, կամ, հարկային պարտավորությունների բացակայության դեպքում՝ հետ կվերադարձվեն հարկ վճարողին:

2.4) «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և դրան կից ընդունված օրենքների փաթեթի շնորհիվ ՀՀ քաղաքացիները ընկերության հիմնադրման նպատակով կայցելեն միայն մեկ կառույց, որն էլ փաստաթղթերն ընդունելուց հետո ինքը կիրականացնի բոլոր

ընթացակարգերը: Անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման պահանջի փոխարեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել ցանկացող ֆիզիկական անձինք կհաշվառվեն գրանցող մարմնի կողմից: Հաշվառումը հավաստող փաստաթուղթը՝ վկայականը, կներառի ՀՎՀՀ-ն: Այսուհետ արգելվում է այն իրավաբանական անձանց գրանցումը, որոնց հիմնադիր(ներ)ը դատապարտված են եղել տնտեսական գործունեության դեմ ուղղված, ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություն(ներ)ի համար:

Օրենսդրական նախաձեռնությունների փաթեթի ընդունմամբ կնվազեն նաև կոռուպցիոն ռիսկերը:

2.5) Վերոհիշյալ փաթեթի հետ որպես մեկ միասնական ամբողջություն կարելի է դիտարկել նաև «Հարկերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին և դրան կից ընդունված օրենքները, որոնք նույնպես ապահովելու են մեկ պատուհանի սկզբունքի կիրառումը: Կազմակերպությունները և անհատ ձեռներեցները պետքեզիստորում կամ ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուն զուգահեռ ստանալու են նաև հարկ վճարողի հաշվի համար:

Օրենսդրական նախաձեռնության ընդունմամբ կնվազեն նաև կոռուպցիոն ռիսկերը:

2.6) <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> և դրան կից ընդունված 15 այլ ՀՀ օրենքներով կրճատվեցին լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները: Օրենքի նպատակը գործարարներին ավելորդ ծանրաբեռնվածությունից ազատելն ու կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելն է:

3. Սոցիալական բնույթի օրենքներ

3.1) <<Պետական կենսաթոշակների մասին>> և դրան կից ընդունված օրենքների փաթեթն ապահովելու է կենսաթոշակային համակարգում կուտակային բաղադրիչի ներդրումը: Առաջարկվող պայմանակուտակային համակարգը միջազգային պրակտիկայում կրառվող լավագույն փորձի օրինակ է, որի կիրառմամբ անմիջական կապ է ստեղծվում մարդու եկամուտների և կենսաթոշակի միջև: Մինևույն ժամանակ կուտակային կենսաթոշակային համակարգը ապահովում է մարդու աշխատունակ տարիքում եկամտի և կենսաթոշակային տարիքում կենսաթոշակի միջև էական տարբերության բացառումը: Պետությունն էլ իր հերթին շարունակում է պետական լրացուցիչ աջակցության միջոցով իրականացնել իր սոցիալական պարտավորությունները:

Ընդունված օրենքների փաթեթը հնարավորություն կտա Հայաստանում ստեղծել մի համակարգ, որը միջին և երկար ժամկետում կապահովի կայուն և ինքնաֆինանսավորվող կենսաթոշակային համակարգ՝ ապահովելով աշխատողների և կենսաթոշակառուների կյանքի որակի ճեղքվածքի նվազումը, ինչպես նաև կստեղծի տնտեսությունում երկարաժամկետ ներդրումների համար հիմք: Բացի այդ առաջարկվող համակարգով պետությունը հստակ պատասխանատվություն է կրում կուտակված միջոցների պահպանման և կառավարման անվտանգության ապահովման համար, այդ թվում՝ երաշխավորելով անհատների կողմից կատարվող վճարների վերադարձելիությունը:

3.2) <<Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքը, որը ներառում է նաև աշխատանքի տոնավաճառների կարգավորումը, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատիրոջ զբաղվածության հարցի կարգավորումը՝ նրանց ընդգրկելով մասնագիտական ուսուցման ծրագրերում՝ այդ ընթացքում նաև տալով կրթաթոշակ: